ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N2.46
ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ «ՀԱՆ-ՄԱԾՁԲ-02/20(2)»

ք. Երևան «10» հունիսի 2020թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ավիառումնական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ.Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ՝ Օդային երթևեկության կառավարման կարգավարների աշխատատեղում վարժանք անցկացնող կարգավար-հրահանգչի որակավորման սկզբնական դասընթացի և Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ՝ Օդային երթևեկության կառավարման կարգավարների մասնագիտական համապատասխանությունը գնահատող-քննող կարգավարի որակավորման սկզբնական դասընթացի մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների

համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **730 720 (յոթ հարյուր երեսուն հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ:** Կատարողը ԱԱՀ վճարող չի հանդիսանում:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ
ք.Երևան-0042, Ի.Գասպարյան 33	ք. Երևան, «Զվարթնոց» ՕԿ
Հ/Հ 247064200089	Հ/Հ 24706420711800000՝
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ	ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144	ՀՎՀՀ 01204026
Գլխավոր տնօրեն	**Տնօրեն** _____ **Գ.Խաչատրյան**
_____ **Ա.Գասպարյան**	(ստորագրություն) Կ.Տ
(ստորագրություն) Կ.Տ.	

Հավելված N 1
« 10 » հունիսի 2020 թ. կնքված
N 2.45 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության							
Հ/հ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79631200/6	Տես հավելված 1.1:	դրամ	257920	1	«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ ք. Երևան, «Զվարթնոց» ՕԿ	մինչև 2020թ. հունիսի 30-ը:
2	79631200/7	Տես հավելված 1.1:	դրամ	472800	1	«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ ք. Երևան, «Զվարթնոց» ՕԿ	մինչև 2020թ. հունիսի 30-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն
Ա.Գասպարյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, «Զվարթնոց» ՕԿ
Հ/Հ 2470642071180000
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01204026
Տնօրեն **Գ.Խաչատրյան**
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1.1
« 10 » հունիսի 2020 թ. կնքված
N 2.45 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

1-ին չափաբաժին՝ Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ՝ Օդային երթևեկության կառավարման կարգավարների աշխատատեղում վարժանք անցկացնող կարգավար-հրահանգչի որակավորման սկզբնական դասընթաց (79631200/6)

Գնման առարկա է հանդիսանում օդային երթևեկության կառավարման կարգավարների աշխատատեղում վարժանք անցկացնող կարգավար-հրահանգչի որակավորման սկզբնական դասընթացի կազմակերպումը և իրականացումը <<Ավիառուսումնական կենտրոն>> ՓԲԸ-ում:

Դասընթացի նպատակն է պատրաստել օդային երթևեկության կառավարման կարգավարների աշխատատեղում վարժանք անցկացնող կարգավար-հրահանգիչ: Դասընթացը պետք է ներառի տեսական ուսուցման և վարժասարքային գործնական պարապմունքներ: Տեսական ուսուցումը պետք է պարունակի դասավանդման տարբեր մեթոդներ, ինչպիսիք են դերային խաղարկումներ, տեսանյութեր, փաստաթղթերի ուսումնասիրություն և քննարկումներ: Վարժասարքային գործնական պարապմունքները պետք է ներառեն վարժանքի տեխնիկայի գործնական վարժություններ, որոնք իրականացվում են ռադարային վարժասարքի վրա և զուգորդվում են դասավանդողների կողմից մանրամասն արձագանքներով,

- դասընթացի ծրագիրը պետք է հիմնված լինի 2015 թվականի փետրվարի 20-ի 2015/340 Եվրամիության Հանձնաժողովի կանոնակարգի վրա,
-դասընթացի ծրագիրը նախատեսված է ՕԵԿ կարգավարի գործող վկայական և ՕԵԿ միավորի հատուկ նիշ կրող ՕԵԿ կարգավարների համար,
-դասընթացը պետք է ներառի ՕԵԿ կարգավարների աշխատատեղում վարժանք անցկացնող կարգավար-հրահանգչի հմտությունների գնահատում, թե տեսական և թե գործնական քննությունների տեսքով,
- դասընթացը և քննությունը պետք է անցկացվեն անգլերեն կամ հայերեն լեզվով,
-անհրաժեշտ բոլոր նյութերը պետք է լինեն անգլերեն կամ հայերեն լեզվով:

Օդային երթևեկության կառավարման կարգավարների աշխատատեղում վարժանք անցկացնող կարգավար-հրահանգչի որակավորման սկզբնական դասընթացն ավարտելուց հետո քննության արդյունքում մասնակիցը պետք է ստանա ավարտական վկայական, ինչը պետք է հավաստի ծառայությունների գործունեության շրջանակում ծրագրով նախատեսված ուսուցման ավարտը:

Ուսուցման տևողությունը՝

- օդային երթևեկության կառավարման կարգավարների աշխատատեղում վարժող կարգավար-հրահանգչի որակավորման սկզբնական դասընթացի տևողությունը պետք է լինի /10/ աշխատանքային օր ութսուն /80/ ակադեմիական ժամի հաշվարկով՝ համաձայն <<Ավիառուսումնական Կենտրոն>> Փակ Բաժնետիրական Ընկերության կողմից հաստատված հետևյալ ծրագրի՝

Հ/հ	Թեմաների անվանում	Ժամաքանակ			
		Ընդհա-նուր	Տեսա-կան	Գործնա-կան	Քննութ-յուն
1.	Դասընթացի ներածություն՝ ընդհանուր տեղեկատվություն:	1	1		
2.	Ուսումնական Թեորիա՝ վերահսկողության մոտեցում:	3	3		
3.	Կանոնակարգող փաստաթղթեր՝ ՕԵԿ կարգավարների նորմատիվ իրավական ակտեր:	4	4		

4.	Տերմինաբանություն և հաղորդակցություն:	2	2		
5.	Բանավոր նախահրահանգավորում:	2	2		
6.	Ուսուցման մեթոդիկա և ներգրավում:	3	3		
7.	Վարժանքի հրահանգավորման մեթոդներ:	3	3		
8.	Ուսուցման մոնիտորինգ և գրառումների տեխնիկա:	2	2		
9.	Միջամտության տեխնիկա և սխալների ուղղում:	4	4		
10.	Ավիացիոն հոգեբանություն և մարդկային գործոն ուսուցման ընթացքում:	3	3		
11.	ՕԵԿ ուսանող կարգավարի նախահրահանգավորում:	2	2		
12.	Սթրեսների կառավարում	3	3		
13.	ՕԵԿ կարգավարի վարժանքի գնահատման մեթոդներ:	2	2		
14.	Զեկույցների պատրաստում:	2	2		
15.	Հրահանգչի նախնական առաջադրանքների բաղադրիչները և Օդային տարածքի մոդելավորում:	4	4		
16.	Տեսական գիտելիքների ստուգարք:	5			5
17.	ՕԵԿ կարգավարի վարժանքի գործնական պարապմունք՝ բանավոր նախահրահանգավորում, ուսուցման մեթոդիկա և ներգրավում:	10		10	
18.	ՕԵԿ կարգավարի վարժանքի գնահատման մեթոդների գործնական պարապմունքի վերլուծություն և ուղղիչ ցուցումներ:	10		10	
19.	Գործնական պարապմունքի վերլուծություն և ուղղիչ ցուցումներ:	10		10	
20.	Աշխատանքային հմտությունների գործնական քննությունն:	5			5
	Ընդամենը	80	40	30	10

Պատվիրատուի ՕԵԿ կարգավարներից աշխատատեղում վարժանք անցկացնող կարգավարհրահանգչի որակավորման սկզբնական դասընթաց պետք է անցնի թվով մեկ /1/ ՕԵԿ կարգավար,

2-րդ չափաբաժին՝ Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ՝ Օդային երթևեկության կառավարման կարգավարների մասնագիտական համապատասխանությունը գնահատող-քննող կարգավարի որակավորման սկզբնական դասընթաց (79631200/7)

Գնման առարկա է հանդիսանում օդային երթևեկության կառավարման կարգավարների մասնագիտական համապատասխանությունը գնահատող-քննող կարգավարի որակավորման սկզբնական դասընթացի կազմակերպումը և իրականացումը <<Ավիառուսումնական կենտրոն>> ՓԲԸ-ում:

Դասընթացի նպատակն է պատրաստել օդային երթևեկության կառավարման կարգավարների մասնագիտական համապատասխանությունը գնահատող-քննող կարգավարներ, ուսուցանել նրանց այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են ՕԵԿ կարգավարների մասնագիտական համապատասխանությունը արդյունավետորեն գնահատելու համար:

Դասընթացի ծրագիրը պետք է

- ապահովի մասնակիցների ակտիվ ներգրավվածությունը;
- հնարավորություն տա մասնակիցներին վերլուծելու տարբեր թեմաներ՝ կազմելով աշխատանքային խմբեր;
- ներառի գնահատման տարբեր մեթոդներ, ինչպիսիք են դերային խաղարկումներ, տեսանյութեր, փաստաթղթերի ուսումնասիրություն և քննարկումներ;
- մշակված լինի քաղաքացիական ավիացիայի միջազգային պահանջների համաձայն և հիմնված լինի ՕԵԿ կարգավարների լիցենզիաների և վկայագրերի տեխնիկական

պահանջներին և ադմինիստրատիվ ընթացակարգերին վերաբերող 2015 թվականի փետրվարի 20-ի 2015/340 Եվրամիության Հանձնաժողովի կանոնակարգի վրա;

- դասընթացի ծրագիրը նախատեսված է ՕԵԿ կարգավարի գործող վկայական և ՕԵԿ միավորի կարգավար-հրահանգչի հատուկ նիշ կրող ՕԵԿ կարգավարների համար,
- ներառի ՕԵԿ գնահատող-քննող կարգավարի հմտությունների գնահատում, թե տեսական և թե գործնական քննությունների տեսքով:

Դասընթացը և քննությունը պետք է անցկացվեն անգլերեն կամ հայերեն լեզվով:
Դասընթացի համար անհրաժեշտ բոլոր նյութերը պետք է լինեն անգլերեն կամ հայերեն լեզվով:
Օդային երթևեկության կառավարման գնահատող-քննող կարգավարի որակավորման սկզբնական դասընթացն ավարտելուց հետո քննության արդյունքում մասնակիցները պետք է ստանան ավարտական վկայական, ինչը պետք է հավաստի ծառայությունների գործունեության շրջանակում ծրագրով նախատեսված ուսուցման ավարտը:
Ուսուցման տևողությունը՝
- Օդային երթևեկության կառավարման կարգավարների գնահատող-քննողի որակավորման սկզբնական դասընթացի տևողությունը հինգ/5/ աշխատանքային օր է, քառասուն /40/ ակադեմիական ժամի հաշվարկով՝ համաձայն <<Ավիաուսումնական Կենտրոն>> Փակ Բաժնետիրական Ընկերության կողմից հաստատված հետևյալ ծրագրի՝

Հ/հ	Թեմաների անվանում	Ժամաքանակ			
		Ընդհա-նուր	Տեսա-կան	Գործնա-կան	Քննութ-յուն
21.	Դասընթացի ներածություն՝ ընդհանուր տեղեկատվություն:	1	1	-	-
22.	Խնդիրներ և պատասխանատվություններ:	4	4	-	-
23.	Վկայական, հատուկ նիշ և հաստատման գործընթաց:	4	4	-	-
24.	Ունակությունների գնահատման գործառույթ:	4	4	-	-
25.	Գրավոր քննություն:	3	-	-	3
26.	Արձանագրությունների գնահատում:	4	4	-	-
27.	Գնահատման կառավարում	4	4	-	-
28.	Գնահատման անցկացում	4	4	-	-
29.	Վարպետության գնահատում	5	5	-	-
30.	Աշխատանքային հմտությունների գործնական քննությունն:	7	-	5	2
	Ընդամենը	**40**	**30**	**5**	**5**

Պատվիրատուի ՕԵԿ կարգավարներից գնահատող-քննողի որակավորման սկզբնական դասընթաց պետք է անցնեն թվով 4 ՕԵԿ կարգավարներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաերոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն
_____**Ա.Գասպարյան**
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, «Զվարթնոց» ՕԿ
Հ/Հ 2470642071180000
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01204026
Տնօրեն _____**Գ.Խաչատրյան**
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
« 10 » հունիսի 2020 թ. կնքված
N 2,45 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության										
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79631200/6	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ՝ Օդային երթևեկության կառավարման կարգավարների աշխատատեղում վարժանք անցկացնող կարգավար-հրահանգչի որակավորման սկզբնական դասընթաց	257 920	257 920	257 920	257 920	257 920	257 920	257 920	**257 920**
2	79631200/7	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ՝ Օդային երթևեկության կառավարման կարգավարների մասնագիտական համապատասխանությունը գնահատող-քննող կարգավարի որակավորման սկզբնական դասընթաց	472 800	472 800	472 800	472 800	472 800	472 800	472 800	**472 800**

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն
_____**Ա.Գասպարյան**
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ավիառուսումնական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, «Զվարթնոց» ՕԿ
Հ/Հ 2470642071180000
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01204026
Տնօրեն _____**Գ.Խաչատրյան**
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված 3
« » հունիսի 2020 թ. կնքված
N պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

« » հունիսի 2020 թ. կնքված
N պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն